ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 101-ԱՄՅԱԿԻ ՕՐԸ 57 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՀԱՄԱԼՐԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՐՔԵՐԸ

09.12.2019 20:22

Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոցի 57 շրջանավարտներ 2019թ. դեկտեմբերի 6-ին ստացել են փաստաբանական գործունեության արտոնագրեր: Փաստաբանների պալատի խորհրդի անդամները միաձայն քվեարկել են արտոնագրեր տալու օգտին, քանի որ շրջանավարտները հաղթահարել են որակավորման երկու փուլերի քննությունները:

Ողջույնի խոսքում Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը փաստաբանական համայնք նոր մուտք գործող փաստաբաններին խորհուրդ է տվել խուսափել կոռուպցիոն ռիսկերի մեջ ներգրավվելուց: Նրա համոզմամբ կոռուպցիան մասնագիտական առումով զարգանալու հնարավորություն չի տալիս փաստաբանին:

«**Պատկերացրեք դուք աշխատեք, չարչարվեք հայցադիմում կամ բողոք կազմեք, խորհրդակցեք ձեր գործընկերների հետ, նախադեպեր ուսումնասիրեք և որևէ պաշտոնատար անձ կոռուպցիայի գնով ձեր բողոքը մերժի: Այդ անարադարությունը ձեզ համար էլ արգելակող է լինելու: Սա է հիմնական պատգամը: Հաջորդը կցանկանայի նշել, որ դուք փաստաբանական համայնք մուտք եք գործում ձեր ձեռք բերած գիտելիքների միջոցով: Դա նշանակում է, որ դուք մեր համայնք մուտք եք գործել մաքուր, բաց պայմաններով և հորդորում ենք, որպեսզի այդպես էլ շարունակեք աշխատել**»,- նշել է Արա Զոհրաբյանը:

Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը, շնորհավորելով որակավորման քննությունները հանձնած և փաստաբանի երդում տալուն պատրաստ հավակնորդներին, նշել է,-«**Դուք բավականին կրթական դժվարությունների միջով անցել ու հասել եք այս կարգավիճակին: Վստահ եմ, որ մասնագիտական գործունեությանն անցելիս վստահ եմ կապը չեք կտրի Փաստաբանական դպրոցից, Փաստաբանների պալատից: Մենք միասին դեռ շատ միջոցառումներ պետք է իրականացնենք, մեկ անգամ ևս շնորհավորում եմ փաստաբան դառնալու կապակցությամբ**»:

Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Կարեն Մեժլումյանը մասնագիտական գործունեության

արտոնագիր ստացող ունկնդիրներին հայտնել է, որ փաստաբանությունը հնարավորություն կտա ֆինանսական առումով լինել բարեկեցիկ, մասնագիտական բավարարվածություն ու հաջողություններ ունենալ: «**Իրավական ընկալման առումով մաղթում եմ, որպեսզի միշտ օրինակելի լինեք: Ձեր օրինակով ձեր ընկերները, երեխաները հարազատ մարդիկ ցանկանան դառնալ փաստաբան**»,- նշել է փաստաբանը:

Պալատի խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանը նույնպես շնորհավորել է փաստաբանական դպրոցի շրջանավարտներին ու խորհուրդ տվել երբեք խոցելի չլինել: «**Խոցելի չլինելու համար երկու բան է պետք: Փաստաբանը պետք է իր գործն անի պրոֆեսիոնալ դաշտում և իր փառքը կգա: Այն ժամանակ, երբ շտապեցիք ու ձգտեցիք փառքին, խնդիր եք ունենալու, քանի որ ձեր յուրաքանչյուր քայլ լինելու է խոշորացույցի տակ: Դուք հետագայում քննչական գործերով եք ներգրավելու և ձեր ամեն ինչը ստուգվելու է, այնպես որ հիմիկվանից ճիշտ կլինի սկսեք մաքուր և շարունակեք այդպես մնալ**»,-նշել է Սեդրակ Ասատրյանը:

Խորհրդի անդամ Գայանե Դեմիրչյանն էլ շնորհավորական իր խոսքում կարևորել է փաստաբանի մասնագիտության դերը արդարադատության կայացման գործում և նշել, որ,-«**Արդարադատության կատարելությանը հասնելու համար ձեր գործունեության հիմքում պետք է ունենաք գիտելիքը, որը պետք է անընդհատ կատարելագործեք: Ես ցանկանում եմ, որ երբեք չսահմանափակվեք ունեցած գիտելիքով և անընդհատ զբաղվեք ինքնակատարելագործմամբ**»:

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })